

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի
2017 թվականի**

(համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի)

2017 թվականին ներքին աուդիտի համակարգը գործել է ՀՀ հանրային հատվածի պետական կառավարման թվով 54 մարմիններում (այսուհետ՝ ՊԿՄ) և տեղական ինքնակառավարման թվով 43 մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ):

2017 թվականի տարեսկզբին ներքին աուդիտի համակարգ ներդրած համայնքներից ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության են պատվիրակել թվով 157 (գյուղական) համայնք: Այս ցուցանիշը 2017 թվականի ընթացքում ավելացել է 21-ով, բայց միևնույն ժամանակ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2017 թվականի ընթացքում համայնքների խոշորացման արդյունքով պայմանավորված նվազել 42 համայնքով՝ հաշվետու ժամանակահատվածի ավարտին կազմելով 136 (տե՛ս Ցանկ N 3):

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակմանն ու համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումների շրջանակում 2017 թվականի ընթացքում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) հետ համագործակցության շրջանակներում «Հանրային ֆինանսների կառավարում» ծրագրի աջակցությամբ մշակվել և փորձարկվել է համակարգահեն աուդիտի ձեռնարկը: Նախատեսվում է նշված ձեռնարկը փորձարկել ՀՀ հանրային հատվածի ևս մի քանի կազմակերպություններում, և դրա արդյունքում խմբագրել: Ձեռնարկը միտված է օժանդակելու ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորներին՝ միջազգային ստանդարտներին և լավագույն գործելաոճին համապատասխան աուդիտորական գործունեություն ծավալելու հարցում:

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» (այսուհետ՝ Ցանկ), հաշվետու ժամանակահատվածի սկզբում ընդգրկել է թվով 313 աուդիտոր, որից 249 աուդիտորներ, այդ թվում մեկ աուդիտոր Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված, հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատակիցներ, իսկ հաշվետու ժամանակահատվածի ավարտին ընդգրկել է թվով 312 աուդիտորներ, որից 263 աուդիտոր, այդ թվում 3 աուդիտոր Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված, հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատակիցներ:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող Ցանկում հաշվետու ժամանակահատվածի սկզբում ընդգրկված որակավորված ներքին աուդիտորների համար կազմակերպվել են թվով 16 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է թվով 215 որակավորված ներքին աուդիտոր, որից 2-ը որակավորվել և ընդգրկվել են Ցանկում 2017 թվականի ընթացքում: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 215 աուդիտորներից 185-ը՝ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում՝ 143-ը ՊԿՄ-ի, 39-ը ՏԻՄ-ի, և 3-ը՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի գործառույթների կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներ են, իսկ թվով 30 որակավորված աուդիտորները ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում: Շարունակական մասնագիտական

վերապատրաստման դասընթացներին մասնակցած աուդիտորների թվաքանակի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ մասնակցությունն ավելացել է ինչպես 2016 թվականի, այնպես էլ 2015 թվականի համեմատությամբ, համապատասխանաբար 2016 թվականի համեմատությամբ 32-ով կամ 17.5 %-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ՝ 21-ով կամ 10.8 %-ով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկում ընդգրկված թվով 100 աուդիտոր: Ընդ որում նշված 100-ից 33-ը 2017 թվականին վերաորակավորվելու, 10 աուդիտորներ հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվելու պատճառով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 215 աուդիտորներից թեստավորմանը մասնակցել է թվով 211 աուդիտոր, որից 185-ը հանրային հատվածի աշխատակիցներ են, այդ թվում՝ 143-ը ՊԿՄ-ի, 39-ը ՏԻՄ-ի և 3-ը «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանման, իսկ 26-ը չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների գործող աուդիտորներ: Նշված ցուցանիշը 2016 թվականի համեմատությամբ ավելացել է 90-ով կամ 74.4 %-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ՝ 28-ով կամ 15.3 %-ով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 211 աուդիտորները հաղթահարել են թեստավորման նվազագույն շեմը: Այս ցուցանիշը նույնպես բարելավել է 2015-2016 թվականների համապատասխան ցուցանիշի նկատմամբ: Այսպես, 2016 թվականին թվով 1 աուդիտոր, իսկ 2015 թվականին՝ 8 աուդիտորներ չեն հաղթահարել թեստավորման նվազագույն շեմը: Ցուցանիշի բարելավումը հավաստում է որակավորված աուդիտորների մասնագիտական կարողությունների բարձրացման, կազմակերպվող դասընթացների արդյունավետության մասին: Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել է, իսկ նրանց անունները՝ հանվել Ցանկից, բացառությամբ այն աուդիտորների, որոնք հաշվետու ժամանակահատվածում վերաորակավորվել են կամ գտնվել են հղիության ու ծննդաբերության արձակուրդում:

Ամփոփելով ստանում ենք, որ 2017 թվականի ավարտին հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկում ընդգրկված թվով 61

աուդիտորներ, որից 53-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, 4-ը՝ թեստին չներկայանալու, իսկ 4-ը՝ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման 2-րդ կետով հաստատված պահանջով չվերաորակավորվելու հետևանքով:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2017 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 10 որակավորման քննություն: Որակավորման քննություններին, ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ է ներկայացրել թվով 134 դիմորդ, ընդ որում որակավորման քննությունների համար ներկայացված հայտերի քանակը, ներառյալ վերաորակավորվելու համար, կազմել է՝ 2016 թվականին 237՝ նվազելով 103-ով կամ 43.4 %-ով, իսկ 2015 թվականին՝ 147, նվազելով 13-ով կամ 8.8 %-ով: Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 134 դիմորդներից ներկայացել են թվով 113-ը, որից որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են 85-ը և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում:

Վերաորակավորման հանգամանքը պայանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման 2-րդ կետով հաստատված պահանջով, համաձայն որի՝ այն անձինք, ովքեր ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում են ստացել մինչև տվյալ որոշումն ուժի մեջ մտնելը, ընդգրկվում են հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների ցանկում որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 36 ամիս ժամկետով: Նշված ժամկետը լրանալուց հետո վերջիններս նորից կարող են ընդգրկվել ցանկում, եթե հաջողությամբ հանձնեն որակավորման քննությունը՝ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի պահանջներին համապատասխան: Ընդհանուր առմամբ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման 2-րդ կետով հաստատված պահանջով պայմանավորված, 2016-2017 թվականներին վերաորակավորման համար հայտ են ներկայացրել թվով 131 աուդիտորներ, որից 99-ը՝ 2016 թվականին, իսկ 32-ը՝ 2017 թվականին: 2017 թվականին ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման 2-րդ կետով հաստատված պահանջով պայմանավորված, վերաորակավորում ստացած թվով 32 աուդիտորներից 30-ը հանրային

հատվածի կազմակերպություններում գործող աուդիտորներ են, այդ թվում՝ 25-ը ՊԿՄ-ի, 5-ը ՏԻՄ-ի, իսկ 2-ը չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների աշխատակիցներ: «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետի պահանջներին համապատասխան, 2017 թվականի ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի և այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորումներ ունեցող անձանցից, ներքին աուդիտորների որակավորում ունեցող անձանց ցանկերում ընդգրկվելու համար, ստացվել է 8 դիմում, որոնք ամբողջությամբ բավարարվել են և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին գլխի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներով, ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:


Վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքներով՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց վերաբերյալ 2017 թվականի ամփոփ ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը.

2017 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող, Ցանկում ընդգրկված թվով 312 աուդիտոր, որից 263 աուդիտորներ, ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 9, ինչպես նաև «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի գործառույթների կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող թվով 5 աշխատակիցները, ընդգրկված են հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում, իսկ թվով 49 աուդիտորներ ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում:

2017 թվականին նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ ավելացել

են Ցանկից ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակը, ընդ որում նշված ցուցանիշը 2016 թվականի համեմատությամբ ավելացել է 11-ով, որից 2-ով Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված, կամ 4.6 %-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ՝ 31-ով որից 3-ով Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված, կամ 14,2 %-ով: Միևնույն ժամանակ պակասել է նաև ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական աշխատանքներում չընդգրկված աուդիտորների թվաքանակը համապատասխանաբար 2016 թվականին՝ 15-ով կամ 23.4 %-ով և 2015 թվականին՝ 8-ով կամ 14 %-ով:

Ստորև ներկայացված է Ցանկում ընդգրկված ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ներգրավվածության համեմատական ցուցանիշները հաշվետու և նախորդ երկու տարիների համար, ըստ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում աշխատող, ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված և չընդգրկված անձանց:




Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտորների հաստիքների ընդհանուր թիվը՝

ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողները, կազմել է 331 աուդիտոր, որից 257-ը՝ ՊԿՄ-ում, 74-ը՝ ՏԻՄ-ում, իսկ համալրված հաստիքների ընդհանուր թիվը՝ ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողները, կազմել է 292 աուդիտոր, որից 228-ը՝ ՊԿՄ-ում, այդ թվում 210-ը որակավորված, իսկ 18-ը ուսուցանվող, 64-ը՝ ՏԻՄ-ում, այդ թվում 48-ը որակավորված, իսկ 16-ը ուսուցանվող¹:

2017 թվականին հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված աուդիտորների քանակը 2016 թվականների համեմատ ավելացել է՝ 7-ով, կամ 2,5 %-ով, իսկ 2015 թվականների համեմատ ավելացել է՝ 8-ով կամ 2,8 %-ով:


Ստորև ներկայացված գծապատկերում բերված են 2015-2017 թվականների համապատասխան ցուցանիշները:



2017 թվականին դրական փոփոխություն է արձանագրվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթներում ներգրավված աշխատող

¹ Այս և հաջորդ բաժիններում ներկայացված վերլուծության համար հիմք են հանդիսացել սույն հաշվետվության վերջում առկա լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակների տվյալները, առանց «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի գործառույթների կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող հաստիքների:


որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների քանակական հարաբերակցության մեջ՝ ապահովելով ոլորտի որակական բարելավում: 2017 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների քանակն 2016 թվականի համեմատությամբ ավելացել է 13-ով կամ 5.3%-ով, ուսուցանվող աուդիտորների քանակը պակասել է 6-ով կամ 15 %-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ գործող որակավորված ներքին աուդիտորների քանակն ավելացել է 34-ով կամ 15.2%-ով, ուսուցանվող աուդիտորների քանակը պակասել է 26-ով կամ 43,3 %-ով: ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ տարիների ունի ստորև ներկայացված պատկերը:



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների համալրված 292 հաստիքներից 228-ը, ներառյալ՝ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 8 անձիք, հանդիսանում են ՊԿՄ, իսկ 64-ը, ներառյալ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 1 անձ՝ ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատակիցներ: 2015-2016 թվականների համեմատությամբ 2017 թվականին ՊԿՄ աուդիտորների թիվը ավելացել է 4-ով, կամ 3.6 %-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թիվը պակասել է 1-ով, կամ 1.5 %-ով: 2015 թվականի

համեմատությամբ՝ ՊԿՄ աուդիտորների թիվն ավելացել է 3-ով, կամ 1.3 %-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակի փոփոխություն չի արձանագրվել:


Ստորև ներկայացված է ՊԿՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատակից հանդիսացող ներքին աուդիտորների 2015-2017թթ դինամիկան:



2017 թվականին դրական փոփոխություն է արձանագրվել ՊԿՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների քանական հարաբերակցության մեջ: 2017 թվականին ավելացել է որակավորված աուդիտորների թվաքանակը ինչպես 2016 թվականի, այսպես էլ 2015 թվականի համեմատությամբ՝, համապատասխանաբար 2016 թվականին 14-ով կամ 7.1 %-ով և 2015 թվականին 32-ով կամ 18.0 %-ով, միաժամանակ նվազել է ուսուցանվող աուդիտորների թվաքանակը 2016 թվականին 6-ով կամ 25.0 %-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ 24-ով կամ 57.1%-ով, որն էլ փաստում է ոլորտի որակական ցուցանիշների բարելավման մասին:

ՊԿՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2015-2017 թվականների, ունի հետևյալ պատկերը.


Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՊԿՄ-ներում



2017 թվականին ՏԻՄ ուսուցանվող աուդիտորների քանակական հարաբերակցությունը 2016 թվականի համեմատությամբ չի փոխվել՝ 16 ուսուցանվող աուդիտոր, սակայն հարաբերակցությունը փոխվել է 2015 թվականի համեմատությամբ՝ նվազել է 2-ով կամ 11.1%-ով: Միաժամանակ 2016 թվականի համեմատությամբ նվազել է որակավորված աուդիտորների թվաքանակը 1-ով կամ 2 %-ով և ավելացել 2015 թվականի համեմատությամբ 2-ով կամ 4,3 %-ով:

ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2015-2017 թվականների, ունի հետևյալ պատկերը.

Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՏԻՄ-երում



Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի միջավայրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2016 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՀՀ ողջ հանրային հատվածի կազմակերպությունների գործառույթների 39.3%-ը, 2016 թվականի 35.5%-ի և 2015 թվականի 31.2%-ի փոխարեն: 2017 թվականի ընթացքում փաստացի աուդիտի է ենթարկվել ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների գործառույթների 37.8%-ը, 2016 թվականի 32.5%-ի և 2015 թվականի 29.3%-ի փոխարեն:

2017 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների միավորների 30.4%-ը, 2016 թվականի 31.1%-ի և 2015 թվականի 29.7%-ի փոխարեն: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի աուդիտի է ենթարկվել ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների միավորների 29.5%-ը, 2016 թվականի 29.8%-ի փոխարեն, իսկ 2015 թվականի համեմատությամբ փոփոխության չի ենթարկվել:

Համադրելով այս ցուցանիշները, ստացվում է, որ ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների 2017 թվականի փաստացի կատարողականն ըստ գործառույթների կազմում է 96.3%, իսկ ըստ միավորների՝ 97.0%: Նշված ցուցանիշը 2016 և 2015 թվականներին կազմել է համապատասխանաբար ըստ գործառույթների՝ 91.7% և 93.6%, իսկ ըստ միավորների՝ 95.7% և 99.3%:

Նշված ցուցանիշները վկայում են այն մասին, որ ներքին աուդիտի ստորաբաժանումներն իրենց աշխատանքները հնարավորինս ճիշտ են պլանավորում, իսկ կատարողականի շեղումը գտնվում է կառավարելի տիրույթում:


Ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների² ընդհանուր քանակը 2017 թվականին կազմել է 1692, որից 1682-ը աուդիտորական առաջադրանքներ են, իսկ 10-ը խորհրդատվական ծառայություններ: Նշված ցուցանիշը նվազել է՝ 2016 թվականի համեմատությամբ 8.3%-ով, իսկ 2015 թվականի համեմատությամբ՝ 20.9%-ով:

Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների փաստացի

² Աուդիտորական առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

կատարողականը 2017 թվականին կազմել է 93.7%, 2016 թվականի 94.9% և 2015 թվականի 98.6% փոխարեն: 2017 թվականին պլանավորված աուդիտորական առաջադրանքները թերակատարվել է 107-ով կամ 6.4%-ով, 2016 թվականի 93, կամ 5.1% և 2015 թվականին 30, կամ 1.4%-ի փոխարեն, իսկ պլանավորված խորհրդատվական ծառայությունները ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2016 և 2015 թվականներին կատարվել են 100%-ով: Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում լրացուցիչ իրականացվել է թվով 31 աուդիտորական առաջադրանք և մատուցվել է թվով 96 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2016 թվականի 38 և 73, 2015 թվականի 29 և 77 փոխարեն:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված առաջադրանքների ցուցանիշը, ներառյալ կատարված լրացուցիչ առաջադրանքները, 2016 թվականի համեմատ նվազել է 7.6%-ով, իսկ 2015 թվականի համեմատ՝ 22.7%-ով:



Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աուդիտորական առաջադրանքներում նկատվել է փոփոխություն ըստ տեսակների: Այսպես, 2017

թվականին նախորդ տարվա համեմատ ավելի շատ կատարվել է համակարգի գնահատման աուդիտ՝ 5.6%-ով ավելի, տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ՝ 66.7%-ով ավելի: Միևնույն ժամանակ, 8.3%-ով կրճատվել է համապատասխանության կամ իրավական աուդիտի, 21.2%-ով կատարողականի աուդիտի, 20.7%-ով ֆինանսական աուդիտի և 18.2%-ով գնումների աուդիտի քանակները:

2017 թվականի ընթացքում իրականացվել է գնումների թվով 162 աուդիտ, որից 50-ը՝ գնումների բազային միավորի քանապատիկը գերազանցող գին ունեցող, 110-ը՝ գնումների բազային միավորի քանապատիկը չգերազանցող գին ունեցող և 2-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման գործընթացների նկատմամբ:

2017 թվականին նվազել է ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը: Նախորդ տարվա 12512 դեպքի փոխարեն, 2017 թվականին բացահայտվել է 11063 դեպք՝ ապահովելով 11.4%-ով կրճատում: Անհամապատասխանությունների նվազման նման միտումը վկայում է ներքին աուդիտի գործառույթի արդյունավետ գործունեության մասին:

Ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած թվով 178 գյուղական համայնքներից 2017 թվականի հաշվետու տարում մասնավոր կազմակերպության հետ ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքել թվով 128 համայնքներ: Չնայած 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքների թվի 21-ով ավելացմանը, այնուամենայնիվ ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքած գյուղական համայնքների թվաքանակը նվազել է 20-ով կամ 13.5 %-ով: 2016 թվականին ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած թվով 157 գյուղական համայնքներից ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքվել թվով 148 համայնքներում: 2017 թվականին ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրեր չկնքած համայնքների թվաքանակը 2016 թվականի համեմատությամբ ավելացել է 41-ով, 2016 թվականի 9 համայնքի փոխարեն

2017 թվականին հասնելով 50 համայնքի: Նշված 50 համայնքներում ներքին աուդիտի ծառայություններ չեն իրականացվել, հետևաբար և ՀՀ ֆինանսների նախարարություն հաշվետվություն չեն ներկայացվել: Ներքին աուդիտի մատուցման ծառայություններ ստացած թվով 128 համայնքներից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2017 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությունների վերլուծության արդյունքում պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում պլանավորվել է կատարել թվով 506 առաջադրանք, որից 253 աուդիտորական առաջադրանք և 253 խորհրդատվական ծառայություն՝ ներառելով համայնքներում առկա 253 միավորները և 919 գործառույթները, սակայն փաստացի իրականացվել է 163 աուդիտորական առաջադրանք, ներառելով 163 միավոր և 841 գործառույթ: Փաստացի կատարողականը թերակատարվել է, աուդիտորական առաջադրանքի և միավորների մասով՝ 90-ով կամ 35.6 %-ով, իսկ գործառույթների մասով՝ 78-ով կամ 8.5 %-ով: 2017 թվականի հաշվետու ժամանակահատվածում գերակատարվել է մատուցված խորհրդատվական ծառայությունների քանակը՝ պլանավորված 253 ծառայության դիմացիրականացվել է 1375 խորհրդատվություն: Նշված ցուցանիշները 2016 թվականին համապատասխանաբար կազել են՝ փաստացի առկա 264 միավորներից և 969 գործառույթներից, 148 միավորներում պլանավորվել և կատարվել է 148 աուդիտորական առաջադրանք և 853 գործառույթ, իսկ մատուցված խորհրդատվական ծառայությունները գերակատարվել է՝ պլանավորված 148 ծառայության դիմաց իրականացվել է 2302 խորհրդատվություն:

Համաձայն համայնքների կողմից ներկայացված հաշվետվությունների՝ կատարված ինչպես 2016 թվականի 148, այնպես էլ 2017 թվականի 163 աուդիտորական առաջադրանքների գծով իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ, միաժամանակ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության մեջ նշելով, որ համակարգի գնահատման աուդիտն իր մեջ ներառել է նաև աուդիտի մնացած տեսակները: Ըստ ներկայացված հաշվետվությունների 2017 թվականին նվազել է արձանագրված անհամապատասխանությունների քանակը, 2016 թվականի 5500 դեպքի փոխարեն, 2017 թվականին բացահայտվել է 2796 դեպք՝ ապահովելով 49.2%-ով կրճատում, որոնց վերացման համար ներկայացնել է 2016 թվականին 5099, իսկ 2017 թվականին 2430 առաջարկություն, որոնք ինքնուրույն կանխվել են:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի

վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն³ ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան.

³ Աղյուսակները կազմված են բացառապես հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, առանձին-առանձին, ստացված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքներից:

**Լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ
աղյուսակներ**

Պետական կառավարման և տեղական իքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2017թ. .	2016 թ.	2015թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.3	3.3	3.4
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.4	3.4	3.6

2. Ներքին աուդիտորներ⁴

N	Նկարագիր	2017թ. .	2016 թ.	2015թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	292	285	284
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	258	245	224
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	34	40	60

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2017թ. .	2016 թ.	2015թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	4956	4932	4971
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	22778	21387	24369
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	1508	1536	1475

⁴ Ներքին աուդիտորների թվաքանակն ընդգրկում է հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում համալրված, ներառյալ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, առանց «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող համապատասխանաբար 2017թ.՝ 5, 2016թ.՝ 4 և 2015թ.՝ 5 ներքին աուդիտորի որակավորում ունեցող աշխակիցների:

4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	8943	7587	7613
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	1463	1470	1464
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	8613	6958	7129

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2017թ.	2016 թ.	2015թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	655	620	714
2)	Կատարողականի աուդիտ	52	66	26
3)	Ֆինանսական աուդիտ	436	550	447
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	5	3	2
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	265	289	637
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	162	198	253
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	50	46	57
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	28	24	30
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	22	22	27
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	110	150	195
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	53	78	99
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	57	72	96
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	2	2	1

6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	2	1	1
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	0	1	0
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	70	49	54
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	20	25	34
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	16	15	19
10)	Այլ	31	38	29
11)	Ընդամենը	1712	1853	2215

**5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և
իրականացված առաջադրանքների քանակը**

N	Նկարագիր	2017թ. .	2016 թ.	2015թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	1692	1835	2139
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	1682	1819	2109
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	10	16	30
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1712	1853	2215
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	1606	1764	2108
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	106	89	107

**6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և
արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ
տեղեկություններ**

N	Նկարագիր	2017 թ.	2016թ. .	2015թ. .
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ	11063	12512	40968

	թվում՝			
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	4305	6806	7271
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	6758	5706	33697
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	6739	7481	6114
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	6721	7361	9583
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	5593	6158	7642
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	101	92	98
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	81	108	132
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	946	1003	1711
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	11035	12048	37283
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	13	7	3
4.2)	Ինքնուրույն կանխված	11022	12041	37280

Ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքների կողմից Լիազոր մարմինն ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2017թ.	2016թ.	2015թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.2	3	-
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3	3	-

2. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2017թ.	2016թ.	2015թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	253	264	-
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	919	969	-
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	253	148	-
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	919	853	-
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	163	148	-
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	841	853	-

3. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2017 թ.	2016թ.	2015թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	163	148	-
2)	Կատարողականի աուդիտ	-	-	-
3)	Ֆինանսական աուդիտ	-	-	-
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	-	-	-

6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	-	-	-
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	1375	2155	-
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	-	-	-
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	-	147	-
10)	Այլ, այդ թվում՝	-	-	-
11)	Ընդամենը	1538	2450	-

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2017թ.	2016թ.	-
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	506	296	-
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	253	148	-
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	253	148	-
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1538	2450	-
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	163	148	-

2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	1375	2302	-
------	--------------------------------------	------	------	---

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2017թ.	2016թ.	2015 թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	2796	5500	-
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	1872	3604	-
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	866	1896	-
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	2735	5500	-
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	2430	5099	-
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	1622	3502	-
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	-	-	-
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	-	-	-
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	808	1597	-
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	2430	5099	-
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	-	-	-
4.2)	Ինքնուրույն կանխված	2430	5099	-

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Նախագահի աշխատակազմ
2. ՀՀ Ազգային ժողով
3. ՀՀ Կառավարության աշխատակազմ
4. ՀՀ Սահմանադրական դատարան
5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6. ՀՀ առողջապահության նախարարություն
7. ՀՀ արդարադատության նախարարություն
8. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
9. ՀՀ բնապահպանության նախարարություն
10. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
11. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
12. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն
14. ՀՀ մշակույթի նախարարություն
15. ՀՀ պաշտպանության նախարարություն
16. ՀՀ սպորտի և երիտասարդական հարցերի նախարարություն
17. ՀՀ սփյուռքի նախարարություն
18. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
19. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
20. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
21. ՀՀ ֆինանսների նախարարություն
22. ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտե
23. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
24. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
25. ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե
26. ՀՀ ԿԱ ոստիկանություն
27. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն
28. ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
29. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
30. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
31. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
32. ՀՀ գլխավոր դատախազություն
33. ՀՀ դատական դեպարտամենտ
34. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
35. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
36. ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ
37. ՀՀ հատուկ քննչական ծառայություն
38. ՀՀ հեռուստառադիոյի ազգային հանձնաժողով
39. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

- 40. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
- 41. ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն
- 42. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
- 43. ՀՀ ԷՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
- 44. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
- 45. ՀՀ Արագածոտնի մարզպետարան
- 46. ՀՀ Արարատի մարզպետարան
- 47. ՀՀ Արմավիրի մարզպետարան
- 48. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
- 49. ՀՀ Լոռու մարզպետարան
- 50. ՀՀ Կոտայքի մարզպետարան
- 51. ՀՀ Շիրակի մարզպետարան
- 52. ՀՀ Սյունիքի մարզպետարան
- 53. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
- 54. ՀՀ Տավուշի մարզպետարան

Ցանկ N 2

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

- 1. Աբովյանի համայնքապետարան
- 2. Ագարակի համայնքապետարան
- 3. Ալավերդու համայնքապետարան
- 4. Այրումի համայնքապետարան
- 5. Աշտարակի համայնքապետարան
- 6. Ապարանի համայնքապետարան
- 7. Արարատի համայնքապետարան
- 8. Արթիկի համայնքապետարան
- 9. Արմավիրի համայնքապետարան
- 10. Արտաշատի համայնքապետարան
- 11. Բյուրեղավանի համայնքապետարան
- 12. Գավառի համայնքապետարան
- 13. Գյումրու համայնքապետարան
- 14. Գորիսի համայնքապետարան
- 15. Դիլիջանի համայնքապետարան
- 16. Եղեգնաձորի համայնքապետարան
- 17. Եղվարդի համայնքապետարան
- 18. Երևանի համայնքապետարան`
- 19. Էջմիածինի համայնքապետարան
- 20. Թալինի համայնքապետարան
- 21. Իջևանի համայնքապետարան
- 22. Ծաղկաձորի համայնքապետարան
- 23. Կապանի համայնքապետարան
- 24. Հրազդանի համայնքապետարան

- 25.Ճամբարակի համայնքապետարան
- 26.Մասիսի համայնքապետարան
- 27.Մարտունու համայնքապետարան
- 28.Մեծամորի համայնքապետարան
- 29.Նոյեմբերյանի համայնքապետարան
- 30.Նոր Հաճնի համայնքապետարան
- 31.Չարենցավանի համայնքապետարան
- 32.Ջերմուկի համայնքապետարան
- 33.Սևանի համայնքապետարան
- 34.Սիսիանի համայնքապետարան
- 35.Սպիտակի համայնքապետարան
- 36.Սպեփանավանի համայնքապետարան
- 37.Վայքի համայնքապետարան
- 38.Վանաձորի համայնքապետարան
- 39.Վեդու համայնքապետարան
- 40.Տաշիրի համայնքապետարան
- 41.Քաջարանի համայնքապետարան
- 42.Ծակքարի համայնքապետարան
- 43.Նոր Գեղի համայնքապետարան

Ցանկ N 3

**ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՈՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

1. Արագածոտնի մարզի Արագածավան համայնքապետարան
2. Արագածոտնի մարզի Անտառուտ համայնքապետարան
3. Արագածոտնի մարզի Աղձք համայնքապետարան
4. Արագածոտնի մարզի Ագարակ համայնքապետարան
5. Արագածոտնի մարզի Ակունք համայնքապետարան
6. Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքապետարան
7. Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքապետարան
8. Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքապետարան
9. Արագածոտնի մարզի Ագարակավան համայնքապետարան
10. Արագածոտնի մարզի Արուճ համայնքապետարան
11. Արագածոտնի մարզի Ավան համայնքապետարան
12. Արագածոտնի մարզի Արևուտ համայնքապետարան
13. Արագածոտնի մարզի Աշնակ համայնքապետարան
14. Արագածոտնի մարզի Բազմադքյուր համայնքապետարան
15. Արագածոտնի մարզի Գեղարոտ համայնքապետարան
16. Արագածոտնի մարզի Գեղադիր համայնքապետարան
17. Արագածոտնի մարզի Դմասար համայնքապետարան
18. Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքապետարան

19. Արագածոտնի մարզի Դպրեվանք համայնքապետարան
20. Արագածոտնի մարզի Դիան համայնքապետարան
21. Արագածոտնի մարզի Եղնիկ համայնքապետարան
22. Արագածոտնի մարզի Զարինջա համայնքապետարան
23. Արագածոտնի մարզի Զովասար համայնքապետարան
24. Արագածոտնի մարզի Թլիկ համայնքապետարան
25. Արագածոտնի մարզի Թթուջուր համայնքապետարան
26. Արագածոտնի մարզի Թաթուլ համայնքապետարան
27. Արագածոտնի մարզի Իրինդի համայնքապետարան
28. Արագածոտնի մարզի Լեռնապար համայնքապետարան
29. Արագածոտնի մարզի Լեռնարոտ համայնքապետարան
30. Արագածոտնի մարզի Լուսակն համայնքապետարան
31. Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքապետարան
32. Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքապետարան
33. Արագածոտնի մարզի Ծաղկասար համայնքապետարան
34. Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքապետարան
35. Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքապետարան
36. Արագածոտնի մարզի Կանիաշիր համայնքապետարան
37. Արագածոտնի մարզի Կանչ համայնքապետարան
38. Արագածոտնի մարզի Կոշ համայնքապետարան
39. Արագածոտնի մարզի Կայք համայնքապետարան
40. Արագածոտնի մարզի Զորագլուխ համայնքապետարան
41. Արագածոտնի մարզի Ղազարավան համայնքապետարան
42. Արագածոտնի մարզի Մաստարա համայնքապետարան
43. Արագածոտնի մարզի Մելիքգյուղ համայնքապետարան
44. Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքապետարան
45. Արագածոտնի մարզի Միջատան համայնքապետարան
46. Արագածոտնի մարզի Միրաք համայնքապետարան
47. Արագածոտնի մարզի Նիգավան համայնքապետարան
48. Արագածոտնի մարզի Ներքի Բազմաբերդ համայնքապետարան
49. Արագածոտնի մարզի Նորաշեն համայնքապետարան
50. Արագածոտնի մարզի Նոր Ամանոս համայնքապետարան
51. Արագածոտնի մարզի Շենկան համայնքապետարան
52. Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքապետարան
53. Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքապետարան
54. Արագածոտնի մարզի Շողակն համայնքապետարան
55. Արագածոտնի մարզի Ոսկեթաս համայնքապետարան
56. Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքապետարան
57. Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնքապետարան
58. Արագածոտնի մարզի Պարտիզակհամայնքապետարան
59. Արագածոտնի մարզի Սիփան համայնքապետարան
60. Արագածոտնի մարզի Սուսեր համայնքապետարան
61. Արագածոտնի մարզի Սասունիկ համայնքապետարան
62. Արագածոտնի մարզի Սարալանջ համայնքապետարան
63. Արագածոտնի մարզի Սաղմոսավան համայնքապետարան

64. Արագածոտնի մարզի Սորիկ համայնքապետարան
65. Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքապետարան
66. Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ համայնքապետարան
67. Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքապետարան
68. Արագածոտնի մարզի Վերին Բազմաբերդ համայնքապետարան
69. Արագածոտնի մարզի Վերին Սասնաշեն համայնքապետարան
70. Արագածոտնի մարզի Ցամաքասար համայնքապետարան
71. Արագածոտնի մարզի Ուշի համայնքապետարան
72. Արագածոտնի մարզի Ուջան համայնքապետարան
73. Արագածոտնի մարզի Փարպի համայնքապետարան
74. Արագածոտնի մարզի Օրգով համայնքապետարան
75. Արագածոտնի մարզի Օշական համայնքապետարան
76. Արագածոտնի մարզի Օհանավան համայնքապետարան
77. Արագածոտնի մարզի Օթևան համայնքապետարան
78. Արմավիրի մարզի Բաբակաշատ համայնքապետարան
79. Արմավիրի մարզի Գայ համայնքապետարան
80. Արմավիրի մարզի Մերձավան համայնքապետարան
81. Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքապետարան
82. Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքապետարան
83. Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքապետարան
84. Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքապետարան
85. Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքապետարան
86. Գեղարքունիքի մարզի Գեղիովիտ համայնքապետարան
87. Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքապետարան
88. Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքապետարան
89. Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքապետարան
90. Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքապետարան
91. Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքապետարան
92. Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքապետարան
93. Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքապետարան
94. Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքապետարան
95. Գեղարքունիքի մարզի Ծովասար համայնքապետարան
96. Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքապետարան
97. Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքապետարան
98. Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքապետարան
99. Գեղարքունիքի մարզի Զորագյուղ համայնքապետարան
100. Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքապետարան
101. Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնքապետարան
102. Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքապետարան
103. Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքապետարան
104. Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքապետարան
105. Գեղարքունիքի մարզի Վարդաշեն համայնքապետարան
106. Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքապետարան
107. Լոռու մարզի Գուգարք համայնքապետարան
108. Լոռու մարզի Մեծավան համայնքապետարան

109. Կոտայքի մարզի Առինջ համայնքապետարան
110. Կոտայքի մարզի Ակունք համայնքապետարան
111. Կոտայքի մարզի Գետամեջ համայնքապետարան
112. Կոտայքի մարզի Գողթ համայնքապետարան
113. Կոտայքի մարզի Գեղադիր համայնքապետարան
114. Կոտայքի մարզի Գառնի համայնքապետարան
115. Կոտայքի մարզի Գետարգել համայնքապետարան
116. Կոտայքի մարզի Թեղենիք համայնքապետարան
117. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքապետարան
118. Կոտայքի մարզի Կամարիս համայնքապետարան
119. Կոտայքի մարզի Հացավան համայնքապետարան
120. Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքապետարան
121. Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքապետարան
122. Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքապետարան
123. Կոտայքի ք մարզի Նոր Արտամետ համայնքապետարան
124. Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքապետարան
125. Կոտայքի մարզի Պոռչյան համայնքապետարան
126. Կոտայքի մարզի Պտղնի համայնքապետարան
127. Կոտայքի մարզի Ջրառատ համայնքապետարան
128. Կոտայքի մարզի Սուլակ համայնքապետարան
129. Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարան
130. Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքապետարան
131. Կոտայքի մարզի Քաղսի համայնքապետարան
132. Կոտայքի մարզի Քարաշամբ համայնքապետարան
133. Շիրակի մարզի Ամասիա համայնքապետարան
134. Սյունիքի մարզի Գորայք համայնքապետարան
135. Սյունիքի մարզի Տաթև համայնքապետարան
136. Սյունիքի մարզի Տեղ համայնքապետարան